Արտատպված է՝ Շոլոմ-Ալեյխեմ, Վիպակներ և պատմվածքներ, Ե., Հայպետհրատ, 1964։
Ռուսերենից թարգմանեց՝ Օլգա Սանահյանը։

ԲԺԻՇԿՆԵՐԸ

(Մենախոսություն)

— Ներեցեք, դուք չգիտե՞ք, թե որտեղ է ապրում բժիշկ Ֆայնֆինկելկրաուտը։

— Հը՞։ Ոնց ասացի՞ք Ֆայնֆինֆայն…

— Ֆայնֆինկելկրաուտ։

— Ֆայնֆինկելկրաո՞ւտ։ Այդպես էլ ասացեք։ Ֆայնֆին կելկրաուտ… Ծանոթ ազգանուն է... Դուք հենց նրա՞ն եք ուզում, թե ուրիշ բժիշկ էլ ձեռք կտա։ Մեզ մոտ դրանցից ինչքան ուզեք կա։ Ահա հենց այստեղ, դիմացն էլ է մի բժիշկ ապրում, և նույնիսկ երկու բժիշկ. մեկը իսկական բժիշկ է, մյուսը՝ ատամի։ Եվ ահա այնտեղ, հենց կողքին, այստեղից հաշված երրորդ տանն էլ նույնպես բժիշկ է ապրում, միանգամայն օրինավոր բժիշկ, չնայած հալա շատ ջահել է, բերանից կաթնահոտ է գալիս, բայց վնաս չունի, քանի որ բավականաչափ կարգին պրակտիկա ունի։ Մեր բոլոր բժիշկներն էլ բավականաչափ պրակտիկա ունեն, որովհետև ժողովուրդը, հասկանո՞ւմ եք, հիվանդանում է, աչքով չտամ… Ինչպես ասացի՞ք, ինչպես են կոչում ձեր բժշկի՞ն, Ֆին ֆայնֆին…

— Ֆայնֆինկելկրաուտ։ Նա հարկավոր է ինձ, բայց ոչ ինձ համար։

— Կնո՞ջդ համար։ Այդ դեպքում գնացեք ուղիղ այնտեղ տեսնո՞ւմ եք։ Այնտեղ կանանց բժիշկն է, մանկաբարձ բժիշկը, այսինքն։ Հմո՛ւտ է... Մասնագե՛տ, խոսք չկա։ Հիմա արդեն այդպես է կարգը. ուզածդ հիվանդությունը մասնագիտություն է։ Ստամոքսը մի մասնագիտություն է, լյարդն ու փայծախը՝ մի ուրիշ մասնագիտություն։ Աչքը՝ մասնագիտություն, ջղերը՝ մասնագիտություն և երեխեքի համար էլ առանձին բժիշկ… Եվ բուժելն էլ հիմա այն չէ, ինչ առաջ էր։ Առաջ դեղերով էին բուժում, հաբեր՝ ամեն տեսակի, փոշիներ, դառը խոտեր. հիմի մոդան մեքենաներն են, ինչ-որ շփումներն ու լոգանքը, դե հո սովորական լոգանք չէ, հիմի բժիշկները բաղնեպաններ են դարձել, դա նրանց համար, ո՞վ է իմանում, գուցե շատ ձեռնտու զբաղմունք է... Ասում եք, ի՞նչ մասնագիտություն ունի այդ բժիշկը, որին դուք հարցնում եք։ Նա ո՞վ է։ Հրեա՞ է։

— Իհարկե, հրեա է։ Հո քրիստոնյա չէ։ Դուք չէ որ լսում եք… Ֆայնֆինկելկրաուտ…

— Ֆայնֆինկելկրաուտ, ասացի՞ք։ Հը՛մ, այո, պարզ է, հրեա է։ Որ Ֆայնֆինկելկրաուտ է, կնշանակի հրեա է. մեզ մոտ բոլոր բժիշկները մեծ մասամբ հրեա են։ Չնայած իրենք՝ հրեաները, գերադասում են դիմել քրիստոնյա բժշկի. հրեան սիրում է, որ և՛ փաստաբանը լինի քրիստոնյա, և՛ խանութպանը, և՛ վարդապետը։ Հրեան քրիստոնյայի համար հոգի է տալիս… Ուրեմն ինչպես ասացի՞ք նրան, ձեր բժշկին ինչպես են անվանո՞ւմ։ Ֆայֆեր…

— Ոչ թե Ֆայֆեր, այլ Ֆայնֆինկելկրաուտ։ Նա ինձ բոլորովին այլ գործի համար է պետք…

— Ըհը՛, զորակոչի պատճառով, նշանակում է խորհրդակցել եք ուզում: Հասկանո՛ւմ եմ… Ի՞նչ: Ուրիշ գործո՞վ: Դե, այդ ժամանակ, ուրեմն, նշանելու հարց կա: Ճիշտ չէ՞, գուշակեցի՛: Հապա ի՞նչ: Ուրիշ էլ ինչի՞ համար: Եթե ոչ զորակոչ, ոչ հիվանդություն և երբ նույնիսկ կինդ էլ հիվանդ չէ, ապա ուրեմն կա-չկա, աղջիկ նշանելու համար է... Եթե այդպես է, ես ձեզ կասեմ, որ ձեր այդ… ոնց էր ազգանունը, այնքանով է ձեզ պետք, ինչքան սայլին հինգերորդ անիվը: Ես ձեր ասած բժշկից էլ լավ բժշկի տեղ կասեմ: Ամեն ինչ կախված է հակառակ կողմից, թե ինչքան կուզենան տալ: Ինչքան մեծ է պրակտիկան, օժիտն այնքան շատ է պահանջվում: Իսկ թե, բան է, պրակտիկա իսկի չունենա էլ, բժշկի գինը միշտ էլ բարձր է: Ամենաքոսոտ ուսանողին էլ անգամ, որ դեռ համալսարանումն է, դուք հիմիկվա ժամանակներում հինգ-վեց հազարից պակաս չեք առնի: Էլ ինչ ասել կուզի պատրաստի բժիշկը, թեկուզ հենց ամենախեղճ ու կրակ բժիշկը: Դուք միայն ինձ ճիշտը ասացեք, հակառակ կողմի ցանկությունն ի՞նչ է:

— Ախր չէ, է՛, այդպիսի բան չկա, միանգամայն ուրիշ գործ է: Դուք սխալվում եք...

— Դուք խոսքի մեջ ինձ չեք կարող հաղթել, դուք միայն ականջ արեք, թե ես ձեզ ինչ կասեմ: Եթե միայն հակառակ կողմը հնարավորություն ունի լավ վճարելու, դա կլինի հենց այն, ինչ ձեզ պետք է: Ախր մի իմացեք, թե ի՛նչ բժիշկ է Տեղովը պրոֆեսոր է: Ձեռքիցն ինչ ասես գալիս է. նա և ստամոքսի է, և ջղերի, և ատամների, և երեխեքին է դեղ ու ճար անում, և վիրահատություն է անում... Իսկ ինչ վերաբերում է կանանց, նրանք ամենաբարձր կարծիքի են, որովհետև շենքով-շնորհքով տղա է, պարթև, հասկանո՞ւմ եք, մի խոսքով, տղամարդ է: Դրան գումարած, որ սիոնական է, և մի լեզու ունի, կրա՛կ, բժիշկ հո չի՞, նախշուն կուկլա է, ձեզ բան եմ ասում, էլ ի՞նչ է պետք:

— Ախր չէ, է՛, ես ձեզ ասացի որ ինձ...

— Հը՞: Այդպես էլ ասացեք: Էլ ինչ եք հեքիաթներ պատմում: Տեսնո՞ւմ եք էն քարե ճերմակ տունը:

— Այո, իսկ ինչ: Այնտեղ Ֆայնֆինկելկրառ՞ւտն է ապրում: Այնտեղ ոչ թե Ֆայնֆինկելկրատուն է ապրում, այլ Մեյեր Տոլոչինովը: Մեծահարու՛ստ: Մի ժամանակ շատ աղքատ էր, չփլախի մեկը: Իսկ հիմի, թող նրանից մի մազ չպակասի, թող աստված ինձ և ձեզ հենց այդքան տա: Ահա՛ հենց դա մի աղջիկ ունի, այլանդակ, ոնց որ մեռել: Բայց երբ աստված մարդուս օգնում է, գեշ երեսն էլ դժվար չի լինում ներկով սիրունացնել, մենակ թե փող լինի, մի տասը-տասնհինգ հազար, և դու կարող ես քեզ թույլ տալ, որ հենց Կիևի միջից էլ բժիշկ առնես: Այսինքն՝ նա Կիևում է ուսումը վերջացրել, բայց Ումանից է, այսինքն՝ Ումանում է ծնվել...

— Ինչի՞ համար եք դուք այդ ամենը պատմում:

— Նրա համար, որ դուք հարցրեցիք Ֆայ... Ֆայ...

— Բժիշկ Ֆայնֆինկելկրաուտի՞ն: Ես նրան այն պատճառով չհարցրի, որ նրա համար հարսնացու ճարեմ ու հետը նշանեմ. բժիշկ Ֆայնֆինկելկրաուտը, ախր հասկացեք, ինձ...

— Այդպես էլ կասեիք: Իսկ ես կարծեցի, թե դուք... Թե որ էդպես է, ուրեմն լսեցեք, տվեցեք ձեր ականջը... Դրա համար ես մի մասնագետ ունեմ, նոփ-նոր, ոնց որ ասում են, ասեղի տակից հենց նոր հանած, արդուկի տակից հենց նոր բերած: Վերջերս է ընդունարան բացել... Ժառանգություն է ճանկել մի քանի հազար ոսկի, ահա նա էլ միտք է անում ու ամբողջ փողը տալիս մեքենայի, ինքն էլ գնում է արտասահման: Առայժմ պրակտիկա չունի, բայց թող այնքան կարիք ունենայի շաբաթ օրվա ծախսերի համար, որքան նա պրակտիկայի կարիք ունի: Նա պրակտիկա կունենա՛, մի անհանգստացեք, բոլոր բժիշկներն էլ այդ նույն հիվանդությունների գծով մեծ պրակտիկա ունեն:

Չէ՞ որ մասնագետներ են... Սպասեք, ինչո՞ւ եք շտապում: Ի՞նչ եք արանքը ճղում: Ես հալա չեմ վերջացրել: Ես ձեզ դեռ մի քանի բժիշկ էլ կարող եմ առաջարկել...

— Բայց, ի սեր աստծո, իմ ինչի՞ն են պետք քո բժիշկները: Ի՞նչ եք կպել ինձանից: Ինձ բժիշկներ պետք չեն, ես գործ չունեմ ո՛չ զորակոչի, ո՛չ հարսնացուների և ո՛չ էլ որևէ մասնագետի հետ: Ես սոսկ մի գործակատար եմ, և բժիշկ Ֆայնֆինկելկրաուտը ինձ հարկավոր է միանգամայն այլ գործով. մենք պետք է նրանից ստանանք փայտի փողը... ամբողջ ձմեռվա համար...

— Փայտի համա՞ր: Գրողը տանի, հա՛: Բռնել է մի օտար մարդու օձիքից ու գլուխը տանում: Մի ինչ-որ Ֆինկելկրաուտ է նրան պետք եկել: Բայց միգուցե մարդը ժամանակ չունի: Միգուցե մարդը փնտրում է, թե որտեղից վաստակի մի արծաթ ռուբլի, չէ՞ որ շաբաթ օրը սարի ետևում չէ: Միայն թե ես ձեր դեմքին նայելով իսկույն ևեթ հասկացա, որ դուք փայտի հետ գործ ունեք, աստված ինձ էդպիսի մի երջանկություն տա ծերացած օրերումս: Քե՛զ նման փայտե մարդու... թո՛ւ...